



Համաձայնեցված է՝
 ԼՂՇ ֆինանսների և էկոնոմիկայի
 նախարար Ս. Թևոսյան
 «07» նոյեմբերի 2013թ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 5 » նոյեմբերի 2013թ.

N 223/Վ

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 84/Մ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների նախադպրոցական խմբերի օրինակելի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 188/Մ հրամանի N 15, 16 կետերը.

Հրամայում եմ՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թվականի մայիսի 29-ի «Պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծնողական վճարումների կարգը հաստատելու մասին» N 84/Մ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հրամանում օգտագործված «Պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ» բառակապակցությունը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ և հանրակրթական ուսումնական հաստատությունների նախադպրոցական խմբեր» բառակապակցությամբ:

2. Հրամանով հաստատված կարգի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների և

հանրակրթական ուսումնական հաստատությունների նախադպրոցական խմբերի երեխաների
աննդի ծախսերի համար նախատեսել ծնողական վճարումներ.

- նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների համար՝ ամսական 6000 (վեց հազար) դրամի չափով.
- պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրական 9-ժամյա տևողությամբ նախադպրոցական խմբերի երեխաների համար ամսական 6000 (վեց հազար) դրամի չափով.
- պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրական 6-ժամյա տևողությամբ նախադպրոցական խմբերի երեխաների համար ամսական 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամի չափով»:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեոնային Ղարաբաղի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության և գիտության
վարչության պետ Ռ. Մուսայելյանին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և գործողությունները
ստարածվում են 2013 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:



Ս. ԱՍՐՅԱՆ